2002, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (126)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Սբ. Պատարագ Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում

Կիրակի՝ մայիսի 26-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով՝ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը, որ Հայաստան է ժամանել «Հայաստան-Սփյուռք» երկրորդ համաժողովի առիթով, Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում մատուցեց Սբ. Պատարագ:

Համաժողովի նախօրեին երկու հայրապետները հայ ժողովրդի մայիսյան պատմական հաղթանակների խորհրդով իրենց ողջույնն ու պատգամը հղեցին աշխարհի տարբեր ծայրերից Հայաստան ժամանած համաժողովի մասնակիցներին՝ հորդորելով նրանց հավատով ու միաբանությամբ լծվել հայրենիքի վերաշինության ու զորացման գործին:

Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով Արամ Ա կաթողիկոսին, արարողությանը ներկա հավատացյալ ժողովրդին, իր օրհնությունը տվեց «Հայաստան-Սփյուռք» համաժողովին՝ համոզմամբ, որ «այն դառնալու է կարեւոր հանգրվան հայոց համազգային միաբանության ու ներշաղախ կյանքի»:

Իր հերթին Արամ Ա կաթողիկոսը, մասնանշելով, որ Հայ Առաքելական եկեղեցին մշտապես աղոթել ու պայքարել է հայրենիքի ազատության ու անկախության համար, հավաստեց, որ եկեղեցին շարունակելու է զորավիգ լինել հայրենիքին ու հայրենի պետությանը:

Սրբազան արարողության ընթացքում Գարեգին Բ եւ Արամ Ա կաթողիկոսները կատարեցին Հանրապետական մաղթանք՝ հանուն հայրենիքի անսասանության:

Տես՝ էջ 2

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Երեւան, 2002 թ. մայիսի 26

*Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:*

*«Նախանձ տան քո կերիցէ զիս»:*

*Սիրելի աշխարհասփյուռ զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.*

*Տիրավանդ այս խոսքի ոգին է համախմբել մեզ Հայրենիքում եւ սուրբ պատարագի արարողությամբ մեկտեղել սրբազան աղոթքի:*

*Ուրախ սրտով եւ եղբայրական սիրով Մենք ողջունում ենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, որ «Հայաստան - Սփյուռք» համաժողովի առիթով եկել է Հայրենիք եւ այսօր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ նորակառույց Մայր եկեղեցում մատուցում է սրբազան պատարագ՝ հանուն շինության ու պայծառության ազգիս ու Եկեղեցու, հանուն անսասանության հայոց երկրի ու պետականության:*

*Հավատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների առջեւ կանգնած՝ ողջունում եւ սիրո ու միասնության նվիրական պատգամն ու օրհնություն ենք բերում այստեղ ներկա աշխարհական ու հոգեւորական մեր զավակներին եւ ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին, որի լավատեսական հայացքը այս օրերին ուղղվել է դեպի Երեւան, ուր կարոտահայաց Արարատի դիմաց, Ծիծեռնակաբերդի բարձունքում գումարվելու է համահայկական խորհրդաժողովը:*

*Հայրապետական օրհնությամբ ու գնահատանքով ողջունում ենք պետական այրերին, ինչպես նաեւ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիներ.*

*Մայիսի 26-ը առանձնակի լույսով է բացվում հայության կյանքում, բացվում է Ավարայրի լուսեպսակով, առ Փրկիչը ու առ հայրենի սրբությունները հավատարմության անշեջ ջերմությամբ, «մահն իմացեալ»-ի հավերժական խորհրդով, որ անեն հայի հոգում 1551 տարի գրում եւ օրհնում է Վարդանը Կարմիր: Բացվում է Սարդարապատի, Ապարանի ու Վանաձորի հերոսամարտերի պանծալի փառքով, որ հյուսեցին մահապարտի հանդերձն առած հայ քաջորդիք, եղեռնահար մեր ժողովուրդը՝ պաշտպանելով Սուրբ Էջմիածինն ու Երեւանը, որպեսզի հնարավոր դառնար Հայաստանի Հանրապետության հիմնադրումը:*

*Մայիս 26-յան առավոտն այսօր հայոց երկնքում բացվել է նաեւ հուսատվության նոր ճառագումով: Աշխարհի բոլոր կողմերից, Հայաստանի ու Արցախի մարզերից դուք, սիրելիներ, հայրենյաց սերը ձեր սրտերում եկել եք Երեւան՝ մասնակցելու համար խորհրդաժողովի աշխատանքներին: Հայրենիքը այս անգամ կողք-կողքի է բերել մեզ հայոց նոր կյանքի վերաշինության լայն ճանապարհի սկիզբը դնելու առաքելությամբ: Եվ ինչպես Ավարայրի մարտից առաջ հայոց բանակը, այսօր մենք՝ անմահ պատարագի սրբախոս աղոթքով, Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսության հայցումով հավաքվել եւ ուխտի ենք կանգնած Աստծո ու մեր նախնյաց առջեւ Երեւանի Մայր եկեղեցու նորաօծ կամարների ներքո: Արդարեւ, այսպիսի սրբազան մի օրվա համար է արեւմտահայ մեծանուն բանաստեղծ, հայրենյաց սիրո ու ազատության երգիչ Շահազիզն ասել.*

*«Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,*
*Ազատ կամքով ու խղճով,*
*Այնտեղ Վարդան, անման Վարդան*
*Իր խմբերի քաջերով»:*

*Այստե՛ղ են մեր հավատի ու Հայրենիքի համար դարերով ընկած, հայրենի մեր ժառանգության համար դարերով տքնած մեր սուրբ նախնիները եւ Վարդանի շուրթերով այսօր կոչում են մեզ՝ «միայն թե մեր արիությանն ու քաջությանը վատություն չխառնենք»:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիներ:*

*Պակաս քաջություն, նվիրում ու զոհողություն չպիտի պահանջվի այսօր մեզանից Հայաստանի ու Արցախի շինության ու հզորացման, Սփյուռքում հայ կյանքի զորացման ծառայության մեջ: Հիշենք վերստին եւ ամրագրենք մեր հոգում, որ հավատն է մեր ծառայության՝ մեր զինվորության գլխավոր զենքը, եւ միասնությունը՝ նրա ուժը: Աստվածապաշտությունից եւ առ Տերը հավատից են բխում մեր հույսն ու վստահությունը ապագայի հանդեպ, մեր սերը միմյանց, մեր Եկեղեցու ու Հայրենիքի հանդեպ, որով մեզ համար սիրելի ու հեշտ են դառնում նաեւ մեր պարտականությունները: Հավատով ու սիրով զոդված միասնությունից են ծնունդ առել մեր բոլոր հաղթանակները, նաեւ՝ Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդանիշ այս սուրբ եկեղեցին, որ կառուցված է հայաստանաբնակ ու Սփյուռքի հայորդյաց միասնական կամքով ու ջանքերով՝ իբրեւ վկայություն մեր ժողովրդի նորոգ հավատի իր խաղաղ ու միացյալ կյանքի շինության ճանապարհին, որը շարունակությունն է մեր բոլոր Ավարայրների ու Սարդարապատների, Արցախի ազատամարտի, Հայաստանի անկախության վերահաստատման:*

*Վաղը կայանալու է հանդիսավոր բացումը «Հայաստան-Սփյուռք» համաժողովի: Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների առջեւ այսօր հաստատենք մեր ուխտը «Նախանձ տան քո կերիցէ զիս» վճռականությամբ, որպեսզի զորացած՝ հավատի ու միասնության մեր սուրբ ուխտը իր նոր մարմնավորումները գտնի մեր ծրագրերում ու գործերում:*

*Մենք հայրաբար օրհնում ենք «Հայաստան-Սփյուռք» երկրորդ համաժողովի գումարման նախաձեռնությունը՝ հավատով, որ այն դառնալու է կարեւոր հանգրվան հայոց համազգային միաբանության ու ներշաղախ կյանքի:*

*Հայրենապաշտության լույսով փառազարդ այս օրը հայրենակերտումի իղձով ու հայցով միախառնենք մեր աղոթքները «վասն հաւատոյ, վասն հայրենեաց» մեր հողում հանգած բյուր աղոթքներին եւ մայիս 26-ի ոգեղեն խորհրդով հավատարմության ու միասնության նոր պատգամն առնենք: Հայցենք Բարձրյալից, որ հեղի մեր մեջ Ճշմարտության Իր Սուրբ Հոգին, որպեսզի մեր ներսից կենդանի ջրերի գետերը բխեն եւ պտղաբերվելով մեր նորոգ հավատից, եւ ուժականություն առնելով մեր միասնությունից, ողողեն հայոց նոր կյանքի բոլոր անդաստանները:*

*Թող «Հայաստան-Սփյուռք» համաժողովը «Նախանձ տան քո կերիցէ զիս» ոգով, կյանք իմացյալի գաղափարականով նոր լույսեր հավելի մայիսյան հաղթանակների խորհրդին:*

*Թող Աստծո Արդար Աջը պահապան լինի մեր Հայրենիքին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ ժողովրդին:*

*Սիրով հրավիրում ենք շնորհազարդ մեր եղբորը՝ Արամ Ա Կաթողիկոսին իր պատգամը տալու ու մաղթանքը փոխանցելու ուխտավորոց մեր աղոթքի առիթով:*

*Շնորհք Աստուծոյ եղիցի ընդ մեզ այսօր եւ միշտ. ամէն:*



## Վանաձորի առաջնորդանիստ եկեղեցու հողօրհնեքը

Մայիսի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբան հայրերի ուղեկցությամբ այցելեց Գուգարաց թեմ՝ կատարելու Վանաձորի առաջնորդանիստ եկեղեցու հողօրհնեքը: Վեհափառ Հայրապետի շքախմբում էին նաեւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մի խումբ բարերարներ, որոնց թվում՝ կառուցվելիք եկեղեցու բարերարներ տեր եւ տիկին Սարգիս եւ Հռութ Բեդեւյանները, այս օրերին Մայր Աթոռում գտնվող տեր եւ տիկին Չարլզ եւ Գրեյս Փինեճյանները, սիար Նուբար Ջեւուրյանը, տեր եւ տիկին Ռոբերտ եւ Ջուլիետ Աբելյանները, Տ. Գառնիկ քահանա Հալաճյանը, անգլիաբնակ տեր եւ տիկին Ջորջ եւ Դայանա Քյուրքչյանները:

Լոռու մարզի սահմանագլխին Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը, Լոռու մարզպետ Հ. Քոչինյանը, Վանաձորի քաղաքապետ Ս. Դարբինյանը, մարզային եւ քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Հայրապետական մասնավոր խոսք հղեց նաեւ տեր եւ տիկին Բեդեւյաններին, որոնց նյութական ու բարոյական աջակցությամբ Վանաձորում հիմնվելու է նաեւ հայորդյաց տուն, առողջապահական կենտրոն եւ բարեգործական ճաշարան:

«1918 թ. մայիսյան այս օրերն էին, երբ Ղարաքիլիսայի ձեր հայրերն ու մայրերը կանգնած էին այստեղ հայրենյաց սրբազան մարտը մղելու, հայրենի հողը պաշտպանելու: Իսկ այսօր Աստված մեզ առաջնորդել է այստեղ մեր բարերար զավակների հետ, որպեսզի այս հողի մեջ թափված արյամբ շաղախ դարձնենք նաեւ մեր աղոթքն ու օրհնությունը, որպեսզի նվիրագործված այս հողի վրա վեր հառնի սրբազնասուրբ եկեղեցին հայոց, որ ինչպես այն օրերին, այնպես էլ մեր գոյության ողջ ընթացքին պահել, պահպանել ու այսուհետ էլ պիտի պահի ու պահպանի մեր բարեպաշտ ժողովրդին ու հողը հայրենին»,- հայրապետական իր խոսքը ուղղելով վանաձորցիներին՝ ասաց Հայոց Հայրապետը՝ վստահությամբ, որ նոր եկեղեցու օրհնության



Վանաձորում հայրապետական շքախմբին դիմավորեց հավատացյալների խանդավառ բազմությունը: «Հրաշափառի» երգեցողությամբ Նորին Սրբությունն առաջնորդվեց քաղաքի այն վայրը, ուր առաջիկայում վեր է հառնելու առաջնորդանիստ շքեղ եկեղեցի:

Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց հողօրհնեքի արարողություն, որից հետո Նորին Սրբությունը, թեմակալ առաջնորդն ու Վեհափառ Հայրապետին ուղեկից բարերարները բահերի առաջին հարվածներով ազդարարեցին եկեղեցու կառուցման հողային աշխատանքների սկիզբը:

Հողօրհնեքի առիթով Վեհափառ Հայրապետին ու հավատացյալ ժողովրդին գոհաբանական ու երախտիքի խոսք հղեց թեմակալ առաջնորդը: Սեպուհ սրբազանը շնորհակալ ներքո բարեպաշտ վանաձորցին առավել եւս նախանձախնդիր կլինի հայրերի հավատքի զորացմանը:

Արարողության ավարտին Վեհափառ Հայրապետն իր շքախմբով այցելեց Վանաձորի թիվ 6 միջնակարգ դպրոց, ուր կատարվեց դպրոցականների նկարչական ցուցահանդեսի բացում:

Այստեղից շքախումբն ուղեւորվեց Վանաձորի Սբ. Աստվածածին եկեղեցի, ուր համատեղ աղոթքից հետո Նորին Սրբությունն ականկուռ լանջախաչ շնորհեց Տ. Գառնիկ քահանա Հալաճյանին՝ ի գնահատություն Հայ եկեղեցուն բերած երկարատեւ ու նվիրյալ ծառայության:

Նույն օրը Հայոց Հայրապետը եղավ նաեւ թեմի առաջնորդարանում:

## Հայ Կաթոլիկ Եկեղեցու պետ Ներսես Պետրոս XIX-ը Մայր Աթոռում

Մայիսի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց «Հայաստան-Սփյուռք» երկրորդ համաժողովի առիթով Հայաստան ժամանած Հայ կաթողիկե եկեղեցու կաթողիկոս-պատրիարք Ներսես Պետրոս XIX-ին եւ նրա գլխավորած պատվիրակությանը:

Ամենայն Հայոց Հայրապետն ու Հայ Կաթոլիկ եկեղեցու պետն իրենց գոհունակությունը հայտնեցին համաժողովի գումարման առիթով՝ այն դիտարկելով իբրեւ աշխարհասփյուռ հայությանը հայրենիքի շուրջ համախմբելու կարեւոր քայլ:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը նշեց Հռոմի Կաթոլիկ եկեղեցու հետ բարեկամական կապերը՝ վստահությամբ, որ նոր հազարամյակում էկումենիկ հարաբերությունների ընթացքն իր բարի արդյունքներն է բերելու: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաեւ Մխիթարյան միաբանության հայրերի հայանպաստ գործունեությանը:

◆◆◆

Նույն օրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց ՌԴ Անվտանգության խորհրդի նախագահ Վլադիմիր Ռուշայլոյին՝ ՀՀ Անվտանգության խորհրդի նախագահի, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ընկերակցությամբ:

Ինչպես նշեց պրն. Ռուշայլոն, իր համար ավանդույթ է դարձել Հայաստան յուրաքանչյուր այցի ընթացքում այցելել նաեւ հայոց հոգեւոր կենտրոն:

Հանդիպման ընթացքում զրուցակիցներն ուրախությամբ նշեցին հայ-ռուսական կապերի զարգացումն ու ամրապնդումը:

Հանդիպմանը ներկա էին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը եւ Հայաստանում Ռուսաստանի դեսպան Անատոլի Դրյուկովը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ



## Հայկազունք՝ Երվանդ Սակավակյաց եւ Տիգրան Երվանդյան

Հայաստանը դաշնակցեց Նորբաբելոնյան եւ Մարական թագավորությունների հետ այնքան ժամանակ, քանի դեռ պայքարն Ասորեստանի դեմ էր, որն սպառնալիք էր ներկայացնում Հայաստանի համար: Բաբելոնի եւ Մարաստանի հետագա նվաճողական պատերազմներին Հայաստանը չմասնակցեց: Պայքարն այս անգամ մղվելու էր Մարաստանի դեմ, որն իր արեւմտյան սահմանը հասցրեց մինչեւ Հալիս գետը՝ ի հաշիվ Հայաստանի եւ Կապադովկիայի, իսկ արեւելքում ծավալապաշտ քաղաքականություն վարեց՝ ի հաշիվ Պարթեւքի եւ Հիրկանիայի:

Մարաստանի հարաբերությունները Բաբելոնի հետ նույնպես սկսեցին կորցնել իրենց դաշնակցային բնույթը եւ դարձան թշնամական: Զգուշանալով Մարաստանի հարձակումներից՝ բաբելոնյան թագավոր Նաբուգոդոնոսոր II-ն ամրացրեց իր պետության սահմանները, ինչպես նաեւ ապաստան տվեց քաղաքական փախստականներին Մարաստանից, որը գրավեց նախկինում Բաբելոնի ազդեցության ոլորտում գտնվող Էլամը:

Բաբելոնը հայացքն ուղղեց դեպի արեւելյան միջերկրածովային երկրները, ուր մրցակցության մեջ մտնելով Եգիպտոսի հետ՝ փյունիկյան քաղաքները գրավելուց հետո ոչնչացրեց Հուդայի թագավորությունը եւ գրավեց նրա մայրաքաղաքը՝ Երուսաղեմը (Ք. ծ. ա. 586 թ.): Հազարավոր հրեաներ գերեվարվեցին Բաբելոն եւ Միջագետքի մյուս քաղաքները. «Արդարեւ, հյուսիսից նրա վրա հարձակվեց մի ազգ... Դրոշ բարձրացրեք երկրի վրա, փող փչեցեք բոլոր ազգերի մեջ, զորագնդեր կանչեցեք նրա (Բաբելոնի) դեմ: Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին եւ ասքանազյան գնդին, նրա շուրջը նետաձիգ սարքե՛ք կանգնեցրեք, հարձակվեք նրանց վրա... Նրա վրա հրավիրեք ազգերին ու մարերի թագավորին» (Երեմ. Ծ 3, ԾԱ 27):

Մարաստանն այդ ժամանակ հին աշխարհի հզոր ռազմաքաղաքական ուժերից մեկն էր, սակայն առաջինն այստեղ հիշատակված է Հայոց պետությունը՝ Արարատյան (կամ Այրարատյան) թագավորություններ անվան տակ: Դա վկայում է հնագույն ժամանակներից Արարատյան թագավորություններ անունով հայտնի Հայաստանի հոգեւոր բարձրագույն նշանակության մասին, ինչն արտահայտվել է պատմահոր խոսքում. «Հայոց աշխարհ... վեհագույնը բոլոր հյուսիսականներից»:

*Շարունակությունը՝ էջ 5*

## Հ.Ա.Ե. Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի տարեկան համագումարը

Հայաստանեայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի արեւելեան թեմի հոգեւորականաց տարեկան համագումարը տեղի ունեցաւ ապրիլ 29-էն մայիս 2 օրերուն՝ Արեւմտեան Սփրինկֆիլտի մէջ: Ժողովը, քուէներու մեծամասնութեամբ, թեմակալ առաջնորդ վերընտրեց գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանը:

Համագումարի բոլոր նիստերուն նախագահեց գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան: Ներկայ էին 33 հոգեւորականներ եւ 5 սարկաւագներ:

Համագումարը սկիզբ առաւ երկուշաբթի ապրիլ 29, երեկոյեան ժամը 7:00-ին՝ կրօնական արարողութենէ ետք: Առաջնորդ սրբազան հայրը համագումարի ատենապետներ նշանակեց արժ. Տ. Մամբրէ ա. քհնյ. Գուզուեան եւ արժ. Տ. Կարապետ ա. քհնյ. Քոչաքեան, իսկ ատենադպիրներ՝ հոգշ. Տ. Գրիգոր ծ. վրդ. Մագունեան եւ արժ. Տ. Զենոբ քհնյ. Նալպանտեան: Համագումարի օրակարգը նախապէս ղրկուած էր բոլոր հոգեւորականներուն:

Ներկաները յոտնկայս ունկնդրեցին պատգամը Ամենայն Հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ի: Նորին Սրբութեան պատգամին ի պատասխան ղրկուեցաւ շնորհակալութեան, երախտագիտութեան եւ հաւատարմութեան զգացումներ արտայայտող գիր մը:

Տրուած ըլլալով, որ առաջնորդ գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան 2002 տարին յայտարարած էր «Ս. Պատարագի տարի»՝ օրակարգի առաջին նիւթն էր «Ծխական խորհուրդներու անդամներուն եւ թեմական պատգամաւորներուն յատուկ Ս. Պատարագի ուսուցման յայտագիրը»: Իւրաքանչիւր հոգեւոր հովիւ զեկուցեց իր ծուխին մէջ կատարուած այդ ուսուցման արդիւնքին մասին:

Համագումարը մեծ ցաւ յայտնեց Սուրբ Երկրի մէջ, մանաւանդ Բեթղեհէմ քաղաքի Ս. Ծննդեան եկեղեցւոյ մէջ եւ շրջակայքը պատահած միջադէպերուն մասին: Որոշուեցաւ, որ նամակով մը, ուղղուած Երուսաղէմի Առաքելական Աթոռի պատրիարք ամեն. Տ. Թորգոմ արք. Մանուկեանի, համագումարն իր զօրակցութիւնը յայտնէ Սուրբ Երկրի իր եղբայրներուն եւ քոյրերուն:

Արտայայտուեցան 1700-ամեակի ներկայացուցած նշանակութեան մասին եւ բազում այլ հոգեւոր ու թեմական հարցերուն շուրջ:

Իւրաքանչիւր նիստէ առաջ եւ վերջ տեղի ունեցան առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւններ:

Հինգշաբթի առաւօտ՝ մայիս 2, Ս. Պատարագ մատուցուեցաւ եւ ներկայ հոգեւորականները հաղորդուեցան:

*Դիւան առաջնորդարանի*
*Նիւ Եորք*

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
## (478-490)

Հովհաննես Ա Մանդակունին կաթողիկոսական աթոռ բարձրացավ 478 թվականին, երբ երկիրը գտնվում էր քաղաքական ծանր կացության մեջ: Արտաքնապես, կարծես թե, կրոնական հալածանքներ չկային, քանի որ պարսից արքունիքը, զգուշանալով հայերի հնարավոր նոր ապստամբությունից, որդեգրել էր նոր քաղաքականություն, որի նպատակն էր հասնել հավատուրացության՝ պաշտոններ տալու, տիրույթներ հատկացնելու կամ էլ բացահայտ կաշառելու ճանապարհով: Պարսից արքունիքի քաղաքականությունն իրագործող՝ Հայքի մարզպան Ատրվշնասպի եւ հազարապետ Վեհվեհնամի նմանօրինակ քաղաքականության հետեւանքով ձեւավորվել էր հավատուրաց նախարարների մի խումբ, որը որպես առաջնորդներ ունենալով Գադիշո Խորխոռունուն եւ Գդիհոն Սյունուն՝ պարսից արքունիքին հաճոյանալու եւ նոր տիրույթներ ու կալվածներ ձեռք բերելու համար պատրաստ էր զոհաբերել հայրենիքի եւ ժողովրդի շահերը: Անբարոյական միջնոլորտում ծաղկում էին քսությունն ու մատնությունը, տիրում էր ահի ու սարսափի կացություն: Դժվար էր պատկերացնել, որ այդպիսի գաղջ միջավայրում կաթողիկոսական աթոռը կարող է զբաղեցնել արժանավոր ու հայրենասեր անձնավորություն, որովհետեւ կանոնական օրինավոր ընտրությունը գործնականում դարձել էր գրեթե անհնարին: Հովհաննես Ա Մանդակունու կաթողիկոսանալու համար ժողովուրդը պարտական էր Գյուտ Ա Արահեզացուն, որը շնորհազրկված վիճակում նույնիսկ իրականում իր ձեռքում պահելով հոգեւոր իշխանության լծակները՝ կարողացել էր արժանավոր օգնական ու տեղապահ պատրաստել, որը եւ նրա մահից հետո տիրացավ կաթողիկոսական իշխանությանը: Անունն անգամ հուշում է, որ նա սերում էր Մանդակունիների նախարարական ընտանիքից: Ծնվել է Մանդակունիներին պատկանող Արշամունյաց գավառի Ծախնոտ գյուղում եւ սկզբնաղբյուրների համաձայն՝ աշակերտել է Սահակ Պարթեւին: Մաղաքիա Օրմանյանը գտնում է, որ Հովհաննես Ա Մանդակունին հազիվ թե աշակերտած լիներ անմիջականորեն Սահակ Պարթեւ կաթողիկոսին, ուստի իրավացիորեն ենթադրում է, որ նա պատկանել է վերջինիս աշակերտների աշակերտների թվին, որոնք ուսումնառությունն սկսելով 439 թվականից, այսինքն՝ Սահակ Պարթեւի մահից ոչ շատ առաջ, ձեւականորեն կարող էին իրենց համարել հայոց նշանավոր քահանայապետի աշակերտները, կամ էլ այդ կացությունն առիթ է դարձել, որպեսզի պատմիչները Սահակ Պարթեւին հիշատակեն որպես նոր ձեռնադրված կաթողիկոսի ուսուցչի: Մեզ հասած Հովհաննես Մանդակունու գրչին պատկանող աշխատությունները լավագույն առհավատչյան են այն իրողության, որ նա ստացել է փայլուն կրթություն եւ հմուտ է եղել հունական մատենագիտության մեջ:



Հովհաննես Ա Մանդակունու գործունեության առաջին տարիներն արդյունավետությամբ առանձնապես աչքի չէին ընկնում: Թերեւս կարելի է ենթադրել, որ նա առավելապես զբաղված էր հայրենասիրական ուժերը համախմբելու եւ հավատուրացների պատճառած չարիքները չեզոքացնելու հոգսերով: Սակայն կացությունը շուտով փոխվեց, երբ երկիրը կրկին ապստամբության դրոշ բարձրացրեց: 481 թվին բռնկվեց մի հզոր ապստամբություն, որը պատմագիտության մեջ հայտնի է Վահանանց պատերազմ անունով: Թեեւ հայագիտական ուսումնասիրություններում հենց սկզբից ապստամբության առաջնորդ է հռչակվում 450-451 թթ. ապստամբության հերոս՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի եղբորորդի Վահան Մամիկոնյանը, իրականում ժողովրդական շարժման իրական առաջնորդը, մինչեւ Ճարմանայնու ճակատամարտում զոհվելը, Սահակ Բագրատունին էր՝ հզոր մտքի տեր պետական-քաղաքական մի գործիչ: Ի տարբերություն Վահան Մամիկոնյանի՝ նա անգամ առերես զրադաշտականություն չէր ընդունել եւ, դատելով մի շարք ուղղակի եւ անուղղակի տվյալներից, ուխտապահ նախարարների փաստական առաջնորդն էր: Ձեռնամուխ լինելով առաջիկա ապստամբության նախապատրաստությանը՝ նա երկու շատ կարեւոր քայլ ձեռնարկեց, որոնք դժվար է գերագնահատել: Նրա մեկենասությամբ հայոց պատմահայր Մովսես Խորենացին գրեց իր դարակազմիկ երկասիրությունը՝ «Պատմութիւն Հայոց»-ը, որը գաղափարական զենք դարձավ հայ ժողովրդի համար՝ դաստիարակելով նրա զավակներին հայրենասիրության ոգով եւ մատուցելով հայերին իրենց սխրանքներով, խիզախումներով ու մաքառումներով լի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչեւ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթեւի ժամանակները: Ոչ պակաս նշանակալից էր Բագրատունյաց իշխանի մյուս ձեռնարկումը, որով Մովսես Խորենացին հանձնարարություն էր ստանում տալու Մեծ Հայքի թագավորության աշխարհագրական ու վարչաքաղաքական նկարագրությունը: Վերջինս, որ մարդկությանը V դարում հայտնի քաղաքակիրթ աշխարհի կամ այլ խոսքով օյկումենեի նկարագրության հետ մեկտեղ հայտնի է «Աշխարհացոյց» անունով, ապստամբների համար ծառայեց որպես քաղաքական ծրագիր, թե հաջող ապստամբության դեպքում վերականգնված Մեծ Հայքի թագավորությունն ինչ տարածք եւ սահմաններ պետք է ունենա:

Մինչ Սահակ Բագրատունին աստիճանաբար փորձում էր ձեւավորել ժողովրդական շարժումը, առերես զրադաշտականություն ընդունած Վահան Մամիկոնյանը վարում էր մարզպանության ոսկեհատի պաշտոնը: Մաղաքիա Օրմանյանը հակված է կարծելու, որ Վահան Մամիկոնյանը ոչ թե ոսկի գտնելու եւ արդյունահանելու գործով էր զբաղված, քանի որ Հայաստանում այդ շրջանում ոսկեհանքի գոյությունն արձանագրված չէ, այլ հարկահավաք էր, որի խնդիրն էր պահել հարկահանությամբ հավաքված դրամական միջոցները, սակայն ավելի հավանական է կարծել, որ նա, այնուամենայնիվ, պետության կողմից իրավունք էր ստացել շահագործելու ոսկեհանքերը, որոնք բյուզանդական աղբյուրների համաձայն՝ գոյություն ունեին Տայքի շրջանում:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

# Հայկազունք՝ Երվանդ Սակավակյաց եւ Տիգրան Երվանդյան

Սկիզբը՝ էջ 4

Պատմահայրը գրել է. «Եվ որ արդարեւ այդ ժամանակները մեր ազգը թագավորություն ուներ, վկայում է նաեւ Երեմիա մարգարեն իր մարգարեության մեջ՝ Բաբելոնի դեմ պատերազմի հրավիրելով»:

Հայկազունի հարստության Երվանդյան ճյուղն ստիպված էր դիմակայել Մարաստանի նվաճողական քաղաքականությանը: Այդ ժամանակաշրջանի (Ք. ծ. ա. VI դ.) հայ-մարական եւ հայ-պարսկական հարաբերությունները նկարագրված են հույն պատմիչ ու զորավար Քսենոփոնի (Ք. ծ. ա. V-IV դդ.) «Կյուրոսի վարքը» եւ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկերում:

Մարաց թագավոր Աժդահակն իր թոռանը՝ զորավար Կյուրոսին, ուղարկում է Հայաստան՝ մարական գերիշխանությանը ենթարկելու հայերին: Կյուրոսը խորամանկորեն ձերբակալում է Հայոց թագավոր Երվանդ Սակավակյացին: Երբ Կյուրոսը Հայոց թագավորին հարցնում է, թե ինչո՞ւ նա տուրք չի վճարում, զորք չի տրամադրում եւ ամրոցներ չի շինում, Երվանդը մեծ արժանապատվությամբ պատասխանում է. «Ես ազատության էի ձգտում, որովհետեւ գերադասում էի, որ թե՛ ինքս ազատ լինեմ եւ թե՛ որդիներիս ազատություն թողնեմ»: Երվանդ թագավորի որդին՝ Տիգրանը, Կյուրոսի ուսընկերն էր, եւ հենց Տիգրանի միջնորդությամբ Կյուրոսը հաշտություն է կնքում Երվանդի հետ: Հայոց բանակն այդ ժամանակ բաղկացած էր 8000 հեծյալից եւ 40000 հետեւակից: Հայոց թագավորը զորքով օգնեց Կյուրոսին, որը պատերազմելու էր լեռնական ցեղերի դեմ: Պատերազմն ավարտվեց նրանց հետ խաղաղության պայմանագրի կնքումով:

Տիգրանի եւ Կյուրոսի դաշնակցությունից անհանգստացած՝ Աժդահակը որոշում է դավադրորեն սպանել Տիգրանին: Ամուսնանալով Տիգրանի քրոջ՝ Տիգրանուհու հետ՝ Աժդահակը ծրագրում է նենգորեն իրականացնել դավադրությունը: Նա գիտեր, որ իր դեմ էր հենց իր թոռը՝ հոր կողմից պարսկական ծագում ունեցող Կյուրոսը: Աժդահակը, կեղծ լուրեր տարածելով, փորձում է Տիգրանուհուն տրամադրել եղբոր՝ Տիգրանի դեմ: Սակայն Տիգրանուհին շտապում է նախազգուշացնել Տիգրանին:

Մովսես Խորենացին գրել է. «Երբ այսպիսով չարությունը հայտնի դարձավ, այլեւս ոչ մի խոսքով, ոչ մի խորամանկությամբ չէր կարելի չարությունը քողարկել, եւ այնուհետեւ թշնամական դրությունը գրգռվում էր»: Եվ Հայոց թագավորը զորք է ժողովում՝ Մեծ ու Փոքր Հայքի բոլոր ընտիրներին, Կապադովկիայի, Վրաց եւ Աղվանից սահմաններից, որքան որ կային եւ ամբողջ զորությամբ դիմում է Մարաց կողմերը: «Հակառակության գործը ձգձգվում էր մինչեւ հինգ ամիս, որովհետեւ արագ ու առողջ գործը թուլանում էր, քանի որ Տիգրանը մտածում էր իր սիրելի քրոջ մասին: Նա աշխատում էր այնպիսի մի հնար գտնել, որ Տիգրանուհին փրկվելու ճար գտնի: Երբ այս հաջողվում է, մոտենում է եւ կռվի ժամը»: Գեղապատշաճ է ռազմի պահին Տիգրան Երվանդյանի՝ Հայկազունիներին բնորոշ կերպարով նկարագիրը. «Բայց գովում եմ իմ քաջամարտիկ նիզակավորին, որ բոլոր անդամներով համաչափ էր, մեկը մյուսին ամեն կերպ պատշաճեցրած, կատարյալ գեղեցիկ հասակով, առույգ եւ ուժի կողմից իրեն հավասարը չունեցող»:

Եվ հենց կռվի պահին էլ Տիգրանը հայկյան հարվածով սպանում է իր դեմ բազմաթիվ զորքով ելած Աժդահակին, ինչպես պատմում է Մովսես Խորենացին. «Կռվի ժամանակ Աժդահակի երկաթե ամուր զրահը ինչպես ջուր ճեղքելով՝ Աժդահակին շամփուրում է իր նիզակի ընդարձակ տեգին... Բայց կռիվն սքանչելի էր, որովհետեւ քաջեր, քաջերի հանդիպելով, ոչ մեկը մյուսին շուտով թիկունք չէր դարձնում, ուստի պատերազմը երկարում էր բավական ժամեր, մինչեւ գործին վերջ դրեց Աժդահակի մահը: Այս բարեբախտ դիպվածը նոր փառք էր ավելացնում Տիգրանին»:

Կյուրոսի կողմից Աքեմենյան արքայատոհմի գլխավորած պարսկական պետության հիմնադրումից մեկ տասնամյակ անց հայ-պարսկական միացյալ ուժերը կործանում են Բաբելոնի թագավորությունը: Բաբելոնյան ճակատամարտում հայկական բանակի հեծելազորը գլխավորել է Հայոց թագավոր Տիգրան Երվանդյանը, իսկ հետեւակը՝ Էմբաս զորավարը:

Տիգրան Երվանդյանի պետական գործունեության շնորհիվ՝ Հայկազունի-Երվանդյան արքայատոհմը պահպանեց բնիկ հայրենի՝ Մեծ Հայքի եւ Փոքր Հայքի տարածքները, որոնք ընդգրկում էին ամբողջ Հայկական լեռնաշխարհը: Հայկազունի Տիգրան Երվանդյանին Մովսես Խորենացին այսպես է բնութագրել. «Սա մեկ եւ միակն է Հայկազուններից, որ Աժդահակին սպանեց եւ գերեվարեց նրա տուն ու տեղը եւ Անույշին՝ վիշապների մորը: Նա Կյուրոսին աջակից եղավ՝ Մարաց իշխանությունը տապալելու... եւ մեր բնակության սահմաններն ընդարձակելով՝ հասցրեց մինչեւ հին բնակության ծայրերը: Նա այրերի գլուխ կանգնեց եւ արիություն ցուցաբերելով՝ մեր ազգը բարձրացրեց: Հետեւակ կռվողները ձիավոր դարձան, պարսավորները՝ հաջող աղեղնավորներ, շերտավորները զինվեցին սրերով եւ տեգավոր նիզակներով: Նա խաղաղություն ու շենություն գցեց: Այս եւ այսպիսի ուրիշ շատ բաներ բերեց մեր երկրին այս խարտյաշ եւ մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով անձնագեղ եւ քաղցրատեսիլ, երեւելի անձամբ եւ թիկնավետ, կերակուրների եւ ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր, որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ եւ պերճաբան եւ լի ամենով, ինչը մարդկությանը պիտանի է»: Պատմահայրը շեշտադրել է Տիգրան Երվանդյանի պարկեշտությունը կերակուրների եւ ըմպելիքների մեջ, ինչը Հայոց թագավորների կերպարի բնորոշ գիծն է եղել, եթե հիշենք նաեւ նրա հոր՝ Երվանդի Սակավակյաց կոչվելը, այսինքն՝ քչով բավարարվելով ապրելը:

Պետական եւ ռազմական գործերում այնքան մեծ է եղել Տիգրան Երվանդյանի նպաստը, որ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ միահյուսված է ներկայացրել Տիգրան Երվանդյանի (Ք. ծ. ա. VI դ.) եւ Տիգրան Մեծի (Ք. ծ. ա. I դ.) կերպարները:

Սիրով եւ հպարտությամբ խոսելով Հայկազունիների ժամանակների մասին՝ Մովսես Խորենացին ամփոփել է. «Սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել - Հայկ, Արամ, Տիգրան, որովհետեւ քաջերի սերունդները քաջերն են»:

*Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր*

# ԼԱՎԻՆԻԱ ԲԱԺԲԵՈՒԿ-ՄԵԼԻՔՅԱՆ. ԴԻՄԱՆԿԱՐ



*Հայաստանի ժողովրդական նկարչուհի Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը 80 տարեկան է, թեպետ շատերին այս թիվը կարող է տարակուսելի թվալ: Աշխույժ, կենսախինդ, հոգով ու մարմնով զարմանալի երիտասարդ, ստեղծագործական ավյունով լեցուն նկարչուհին մեզ հիշեցնում է մեկ այլ տաղանդաշատ հայուհու՝ Մարիամ Ասլամազյանին, որը հոկտեմբերին կբոլորի իր 95-ամյակը:*

*«Քրիստոնյա Հայաստան» թերթը ի սրտե շնորհավորում է նրանց՝ հոբելյանական տարելիցների առիթով եւ ցանկանում երկար կյանք ու ստեղծագործական նորանոր հաջողություններ՝ ի փառս հայ կերպարվեստի եւ հայրենիքի:*

Հայ իրականության մեջ ունեցել ենք բազում, այսպես ասած՝ ընտանեկան, տոհմական մասնագիտություններ ու արհեստներ: Կերպարվեստի բնագավառն էլ զերծ չի մնացել նման ավանդույթից: Մեր ժամանակների նման գերդաստաններից կարող ենք հիշատակել Կալենցներին, Էլիբեկյաններին, Սեդրակ Առաքելյանի, Գաբրիել Գյուրջյանի, Էդուարդ Իսաբեկյանի եւ ուրիշ այլ կերպարվեստագետների ընտանիքները: Այս շարքում իր ուրույն տեղն ունի հիրավի տաղանդաշատ նկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի ընտանիքը: Մեծ նկարչի երեք զավակներն էլ՝ որդին եւ երկու դուստրերը, շարունակել են հոր գործը, սակայն նրանցից ոչ մեկը, առաջին եւ այն էլ քանքարաշատ ուսուցիչ ունենալով հորը, նրա տված դասերն ու թողած ժառանգությունը, չի կրկնել, չի նմանակել նրան, այլ ընթացել է իր սեփական ու ուրույն ճանապարհով:

Նրանցից ավագը՝ Հայաստանի ժողովրդական նկարչուհի Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը, ծնվել է 1922 թ. Թբիլիսիում, 1951-ին ավարտել Մոսկվայի Վ. Սուրիկովի անվան գեղարվեստի ինստիտուտը, ամուսնացել ռուս նկարիչ Ալեքսանդր Սուխանովի հետ, մշտական բնակություն հաստատել Մոսկվայում: Թվում է՝ բոլոր նախադրյալները կային հայ իրականությունից, հայկական գեղարվեստական մթնոլորտից հեռու լինելու համար՝ մանավանդ ի նկատի ունենալով նաեւ այն պարագան, որ նա մշտապես շփման մեջ է գտնվել ռուսական հարուստ ու հզոր մշակութային ավանդույթների, իր իսկ ուսուցիչների, ինչպես նաեւ մոսկովյան գեղարվեստական կյանքի ողջ էլիտայի հետ: Ինչ խոսք, նրա արվեստի հիմքերն ամրացնող, ազնվացնող գործընթացում կարեւոր դեր է ունեցել համաշխարհային եւ ռուսական մշակույթի լավագույն ավանդույթների իմացությունը, սակայն ոչ դրանք կրկնելու կամ կրկնօրինակելու, այլ դրանց բազմազանության մեջ իրենը որոնելու, գտնելու առումով: Իրենը ազգային արմատներից սերված ժառանգությունն էր, ազգային մշակույթի գանձարանը, որտեղ նա պետք է իր ներդրումը, իր հաստատուն տեղը ունենար: Եվ նա գնաց նախնիների գցած ճանապարհով, ուղի, որը համաշխարհային մշակույթում թողել է իր ոչ պակաս ինքնատիպ, անկրկնելի դրոշմը:



Լավինիա Բաժբեուկ-Մելիքյանը ոչ միայն Հայաստանի նկարիչների միության անդամ է՝ սկսած 1954 թվականից, այլեւ եղել է ու կա բոլոր հանրապետական ցուցահանդեսների, կերպարվեստի խնդիրներին առնչվող միջոցառումների, քննարկումների ակտիվ մասնակիցը: Դժվար է նկարչուհու ստեղծագործական կենսագրության մեջ մատնանշել տարի, որի առնվազն կեսն անցկացրած չլինի հայաստանյան իր արվեստանոցում: Չկան Հայաստանում գյուղ ու շրջան, վայր ու տեղանք, վանք ու եկեղեցի, որ այցելած ու վրձնած չլինի: Նրա ամուր, ինչ-որ տեղ առնական վրձինը մեզ է թողել բնանկարների ու նատյուրմորտների մի ողջ պատկերասրահ՝ ոճական միասնականությամբ, իրերի ու առարկաների ընդհանրացված հիմնագծերով, գույների ու գունաթույրերի զուսպ ու ներդաշնակ անցումներով, ծավալի, մակերեսի ինքնատիպ ու պնդառճ մշակումներով, որոնց շնորհիվ էլ ուզածդ հարուստ հավաքածուում կարելի է հեշտությամբ որսալ նրա ձեռագիրը: Այդ ձեռագիրը բացառապես զերծ է կեղծ ու արհեստական էֆեկտներից, ավելիքի անհարկի ու սին ճոռոմաբանությունից: Ամբողջության մեջ Լ. Բաժբեուկ-Մելիքյանի արվեստն առանձնանում է հայեցիին բնորոշ վեհությամբ ու խստությամբ:

Չնայած նրա վրձնած բազում ու բազմաթիվ հրաշալի բնանկարների, նատյուրմորտների ու կոմպոզիցիոն կտավների՝ նրա արվեստի ակնառու ուժը, նրա վարպետությունն ու գեղարվեստական աշխարհզգացողությունն ամենից հուժկու զգացվում են դիմանկարում, ժանր, որն ամենաբարդն ու ամենադժվարինն է՝ բնօրինակի խորքն ու բարոյահոգեբանական աշխարհը, մարդկային անվերջ դեգերող հոգու խորխորատները ներթափանցելու առումով: Եթե փորձենք մտովի ի մի բերել նրա տարբեր տարիների կատարած բոլոր դիմանկարները եւ ժամանակագրական կարգով քննել դրանք, ապա առավել հստակորեն կդրսեւորվի նկարչուհու բնատուր այն շնորհը, որ կոչվում է գեղարվեստական հոգեվերլուծում: Զարմանալի խոսուն են Լավինիայի դիմանկարները՝ շիտակ ու անկեղծ, մտերմիկ ու անմիջական, հագեցած յուրաքանչյուր անհատականությանը բնորոշ հուզական ու խոհական ազդեցությամբ: Բնորդի ներաշխարհը թափանցելու, նրա հետ ներքին երկխոսության մեջ մտնելու կարողությամբ Լ. Բաժբեուկ-Մելիքյանը, թերեւս բացառությամբ Մ. Սարյանի, անմրցակից է հայ կերպարվեստում: Այս ժանրում է նկարչուհին ցայտուն կերպով դրսեւորում իրեն որպես տաղանդաշատ արվեստագետ: Նրա հերոսները հիմնականում ծանոթ մարդիկ են՝ անվանի արվեստագետներ, մտերիմներ, ընկերներ ու հարազատներ, որոնց որքան ինքը, նույնքան էլ շատ-շատերը գիտեն ու ճանաչում են: Եվ այս պարագան ավելի է սրում նկարչուհու պատասխանատվությունը՝ վրձնվողի կերպարի, նրա հոգեբանության, ներաշխարհի, ինտելեկտի մասին իր սեփական խոսքն ասելու ուղղությամբ: Հաճախ թվում է, թե նա երկար, շատ երկար է ուսումնասիրել, քննել, վերլուծության ենթարկել պատկերվողին, այլ կերպ ասած՝ հասցրել է «յուրացնել» նրա աշխարհը, սակայն դիտելով նրա գեղջկուհիներին, մանավանդ մանուկներին, հասկանում ես, որ գաղտնիքը նկարչուհու վերլուծական քանքարի մեջ է, հենց իր աշխարհում: Մարդու ես-ը ձեւավորող ներքին ու արտաքին հայտերն ամբողջության մեջ տեսնելու, դրանք կտավի վրա սուղ միջոցներով,



բայց բարձր արտահայտչականությամբ բացահայտելու կարողությունը շնորհ է՝ տրված ի վերուստ: Այդ շնորհը սիրելու արվեստն է: Նա սիրում է մարդուն, սիրում անշահախնդրորեն, սիրում՝ առանց երկմտելու: Հոր՝ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանից մինչեւ Մարտիրոս Սարյան, Մինաս Ավետիսյանից մինչեւ Ռոբերտ Էլիբեկյան, իր քույր Զուլեյկայից մինչեւ Նանա Գյուլիքեխվյան, հենց իրենից մինչեւ գեղջկուհի Բավականն ու լուսագյուղցի աղջնակը ներթափանցված են կենդանի թրթիռով. նրանք ասես զրուցում, պատմում են իրենց մասին նկարչուհու «վրձնափողից»: Խոսում են սեղմ շուրթերով՝ ճոթքերում պահած «հանածոն», խոսում են կոպերի զանազանակերպ բացվածքում ծվարած աչքերով: Խոսում են արժանապատվորեն՝ թող որ ցավի միջից, հույզ ու ապրումի, կորուստների ու գտածի, կյանքի երկար թվացող ճանապարհին կամ մահվան մոտալուտ նիհրի մեջ: Լավինիան սիրում է նրանց, սիրում առանց խտրականության՝ նրանց բոլորի մեջ տեսնելով Աստծո պատկերը կրող արարածների. «Քանզի ամեն ոք, ով սիրում է, Աստծուց է ծնված եւ ճանաչում է Աստծուն» (Հովհ. Ա 4-7): Ահա այսպես, ավետարանական այս պատգամով է ապրում ու ստեղծագործում Լավինիա Բաժբեուկ-Մելիքյան մարդն ու արվեստագետը:

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

---

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա ՄԱՆԴԱԿՈՒՆԻ (478-490)

*Սկիզբը՝ էջ 5*

Եթե խոսքը վերաբերեր սոսկ հարկահավաքությանը, ապա հազիվ թե նա ոսկեհաս կոչվեր, որովհետեւ հարկերը հավաքվում էին առավելապես արծաթյա դրամներով, եւ, որ կարեւորն է, հարկերի չափը եւ մեծությունը խիստ վերահսկելի էին՝ համաձայն աշխարհագրային ցուցակների: Ուստի բնավ էլ պատահական չէր, որ Վահան Մամիկոնյանի գործունեությունը վերահսկելու համար նրան օգնական էր տրված Վրիվ անունով ոմն մի ասորի: Շատ շուտով վերջինս ամբաստանեց Վահան Մամիկոնյանին պարսից արքունիքի առաջ, թե նա ոսկիները ժողովում է ու պահում՝ նպատակ ունենալով դրանցով հունական եւ հոնաց գնդեր վարձել ու ապստամբել: Իմանալով այդ ծանր մեղադրանքի մասին՝ Վահան իշխանը շտապեց Տիզբոն՝ իր հետ վերցնելով հավաքված ոսկիները, հեշտությամբ ցրեց ամբաստանությունները՝ ցույց տալով, որ ապստամբության պատրաստվողը ոսկիները չէր հանձնի պարսից արքունիք եւ իր շուրջը համակիրներ կհավաքեր: Պերոզն ստիպված էր ընդունել Վահան Մամիկոնյանի իրավացիությունը, ուստի վերջինս կրկին հաստատվեց իր պաշտոնում, սակայն այս անգամ՝ առանց օգնականի:

Մոտավորապես այդ ժամանակներում պատերազմ սկսվեց Պարսից տերության եւ Հեփթաղների միջեւ: Ի դժբախտություն Պերոզի՝ պատերազմական գործողությունները



ծավալվեցին բնավ էլ ոչ պարսկական զորքերի օգտին, որը եւ ազատագրվելու հույսեր ներշնչեց պարսկական տիրապետության ներքո գտնվող ժողովուրդներին: Սասանյան գահակալը շուտով ստիպված եղավ Հեփթաղների հետ նվաստացուցիչ հաշտություն կնքել, որից հետո հեփթաղական ճակատում կռվող հայկական զորագունդը հնարավորություն ստացավ երկիր վերադառնալու: Հասնելով Շիրակ՝ հայկական զորագունդը գլխավորող հայ իշխանները լուր ստացան, որ վրաց Վախթանգ Գորգասալ թագավորը սպանել է զրադաշտականություն ընդունած Աշուշայի որդի Վազգեն բդեշխին (Վազգեն բդեշխն ամուսնացած էր Վարդան Մամիկոնյան սպարապետի դուստր Շուշանիկի հետ, որին սպանել էր տվել՝ չհամաձայնելով կնոջն էլ հավատափոխ անելու իր նպատակին) եւ ապստամբել է պարսից դեմ՝ պատերազմական գործողություններ սկսելով պարսկական զորավար Զարմիհր Հազարավուխտի զորքերի դեմ: Խորապես գիտակցելով իր ծանր վիճակը՝ վրաց թագավորը գաղտնի դեսպան էր ուղարկել Հայաստան՝ առաջարկելով ապստամբել Սասանյան տերության դեմ՝ խոստանալով առաջիկա պայքարում հոների եռանդուն օժանդակությունը:

*Շարունակելի*

*Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

